ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> փետրվարի 2025թ. N ՄՈ/282-Ա

ք. Արմավիր

ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 2⊠1-ին կետով հաստատված հավելված N5-ի 44-րդ կետով, հիմք ընդունելով «Մաստեր Մեդ» բժշկական կենտրոնի կողմից 2025 թվականի փետրվարի 24-ին տրված N ZX 094841 անաշխատունակության թերթիկը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի փետրվարի 24-ի զեկուցագիրը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Սմբատյանի բացակայության ընթացքում «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հասմիկ Գրիգորյանին՝ մինչև հիմքի վերացումը:
2. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարման ընթացքում Հասմիկ Գրիգորյանի աշխատանավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-02-25 16:04:39 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա⊠ ՄԵԽԱԿՅԱՆ**

04447253